

3408

1932

3KCM1

U-S8


Ա. ԱՆԴՐԵԱՆ

ԼԵՆԻՆՑԱՆ  
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ • 2001  
ՅԵՎ  
ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ  
ՏՈՒԻՐԻԶՄԸ

ԹԱՐԳՄ. Բ. ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2810

ՊԵՏՀՐԱՍ  
ՌԱԶՄԱՐԱՏՎԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1932 թ.



3KCM1  
Q-58

Ա. ԱՆԴՐԵՅԵՎ

45

ԼԵՆԻՆՑԱՆ  
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՋԻՁՅՈՒՆ  
ՅԵԿ  
ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ  
ՏՈՒՐԻԶՄԱՆ

ԹԱՐԳՄ. Բ. ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆ

~~30/55 - U.L.~~



ԹԵՏՏԱՐԱԾ  
ԱՆՁԱՆԴԱԾՈՒՅԹՆԵՐ  
ՅԵՐԵՎԱՆ 1932 թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կուսակցության դեկավարությամբ, կոմիերիտ-  
միության մասնակցությամբ ՊՏԵԼ բազմամիլոն կազ-  
մակերպություն դարձնենք

1

Հավելվածներ՝

Վորոշում ՀՀԿՑԵՄ ԿԿ Քարտուղարության ըստ ՊՏԵԼ կև դեկուցման	17
Վորոշում ՀՀԿՑԵՄ ԿԿ առուրխոսական աշխա- տանքի հերթական խնդիրների մասին:	20

54649-ահ

4/1775. 68

Թարգման. Բ. Յեղիսաբեյյան  
Արքագրեցին Հ. Սաքելյան. Ե. Հովութունյան

Գետքատի աղաքան

Պատկեր 3398 Գլուխո 7588 (Р) հրատ. 2420 Տ. բաժ. 2000

Հանձնված եւ արտադրության 4 առջիկ 1932 թ.  
Առարտգրք. 3 եւ առաջրիւու 5 դեկտեմբերի 1932 թ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ, ԿՈՄՅԵՐԻՑ-  
ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ—ՊՏԵԼ ԴԱՐՁԵՆՔ  
ԲԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Թույլ տվեք կոմյերիտմիության կենտրոմի ու-  
նունից ջերմադին, բոցավառ վողջույն հայտնել հա-  
մագումարին:

Դուք գիտեք, վոր լենինյան կոմյերիտմիու-  
թյունն առաջինն յեղավ, վոր պլրոլետարական  
տուրիզմի ընկերություն ստեղծելու հարցը դրեց:  
Այդ բացատրվում է նրանով, վոր մենք տուրիտ-  
ական այնպիսի կազմակերպություններ ու-  
նենք, վորոնք իրենց կառուցվացքով, իրենց  
խնդիրներով, իրենց կազմով անհամապատասխան  
եյին բանվոր դասակարգի խնդիրներին, կուսակ-  
ցության և մեր Միության խնդիրներին ամբող-  
ջությամբ:

Տուրիտական հին կազմակերպությունների  
աշխատանքը ուղղված չեր մեր յերկու սանհունե-  
րի և բոլոր աշխատավորների լայն մասսաների  
ինքնագործունեյության զարգացմանը, պրոլետա-  
րիատի դիկտուրուրայի ամբացմանը, բոլոր նրանց  
զատակարգային դաստիարակությանը, ովքեր ու-  
ղում եյին տուրիզմով զբաղվել:

\* ) ՀՀԿՑԵՄ ԿԿ քարտուղար ընկեր Անդրեյելի ճառը ՊՏԵԼ Հարա-  
ժիութենական ւ-ին համազումարում (1932 թ. ապրիլին):

Կոմյերիտմիությունը՝ կուսակցության զեռ  
կավարությամբ, կարողացավ պայթեցնել տու-  
րիստների հին, քաղաքականությունից զուրկ Ռու-  
սական ընկերությունը և ստեղծել նոր, մասսայա-  
կան պրոլետարական տուրիստական շարժումն  
պարզ արտահայտված դասակարգային նպատակ-  
ներով:

Անցան մի քանի տարիներ և կյանքը պարզ ու  
համոզիչ կերպով ցույց տվեց, վոր պրոլետարա-  
կան տուրիզմի կամավոր ընկերություն ստեղծելու  
գործում կոմյերիտմիության գիծը ճիշտ դուրս  
յեկավ:

Այդ գիծը հաստատում են ձեր առաջին հա-  
մագումարը և այն հաջողությունները, վորոնցով  
զուք յեկաք այս համագումարին: Այսորվա համար  
մենք արգեն կարող ենք ասել, վոր կոմյերիտ-  
միությունը՝ տուրիզմի ենառութիստների ակտիվի-  
տետ միասին՝, ի հակալչիու հին, մեկուսացած  
կազմակերպությունների, ստեղծեց պրոլետարա-  
կան տուրիզմի և եքսկուրսիաների մի այնպիսի  
ընկերություն, վորն առաջին հերթին ամենիում  
և իր մեջ մասսաների կամավորականությունը,  
ինքնագործունեյությունը, նախաձեռնությունը,  
Զեղ հետ՝ շարժման անմիջական մասնակիցներիդ  
հետ միասին, մենք բոլոր տվյալներն ունենք հայ-  
տարարելու, վոր միքանի տարվա ընթացքում  
ստեղծված ե, մի այնպիսի ընկերություն, վորը  
թե՛ իր կազմով և թե՛ իր աշխատանքով արդեն  
մասսայական ընկերություն ե դարձել: Մեր ընկե-  
րությունը տուրիզմը դարձրեց վոչ թե մի բուռն

մարդկանց արտանություն, վոչ թե, զվարճալիք,  
այլ աշխատավորների յայն մասսաների սեփական-  
նություն, մեկն այն մեթոդներից, վորոնք նպաս-  
տում են մեր պետության ամրացման, մարդկանց  
սոցիալիստական դաստիարակության, պրոլետա-  
րիատի դիմատուրայի ամրացման, կուլտուրա-  
կան հեղափոխության իրագործման: Ճիշտ ե, մեք  
ընկերության կարևորագույն խնդիրն ե նաև կուլ-  
տուրական հանգստի կազմակերպումը, սակայն  
այդ խնդիրն ել սերտորեն շաղկապվում ե կուսակ-  
ցության քաղաքական և կուլտուրական ընդհանուր  
խնդիրների հետ:

Ընկերություն ստեղծելիս՝ մեր միջամիմեց հաղ-  
թահարել այն մարդկանց թշնամական դիմադրու-  
թյունը, վորոնք ասում եյին՝ «քան չի դուրս գա»:

Պրոլետարական տուրիզմի ընկերությունն  
անեց և ամրացավ հակախորհրդացին արամադրու-  
թյուն ունեցող այն պրոֆեսորների և եքսկուրսիոն  
գործի մասնավետների բուրժուական և մանրբուր-  
ժուական թեորիաների դեմ մզած մարտերում,  
վորոնք ապացուցում եյին տուրիզմի ակադամա-  
րականությունը, նրա մեկուսացման անհրաժեշ-  
տությունը դասակարգային պայքարից, կուսակ-  
ցության և պետության ընդհանուր խնդիրներից:  
Ընկերությունն իր սկզբունքային դրույթները,  
քաղաքական պարզությունը մշակեց նաև ո-  
սպորտունիստական այն թեորիաների և պրակտիկ-  
ուագործունիստների դեմ մզակող պայքարում, վո-  
րոնք ճգնում եյին ապացուցելու տուրիստական  
շարժումն ստեղծելու գործում վերցված թափի

վոչ իրական լինելը, վորոնք փորձում եյին տու-  
բիզմը Փիղկուլուրայի կամ գավառավիտության  
«Հավերլած» դարձնել:

Ընկերներ, անկասկած ե, վոր առաջին համա-  
զոմարին մենք մեծ հաջողություններ ունենք  
ՊՏԵԼ աշխատանքում:

Ստույն, կարո՞ղ ենք մենք արդյար սահմա-  
նափակվել այդ հաղթություններով, նրանք կարո՞ղ  
են արդյոք գոհացնել մեղ, այդ հաջողությունները  
կարո՞ւ են արդյոք առաջնորդել մեղ համար բարա-  
րարաւումն այն պահանջների, վորոնք այսօմ ինկե-  
րության առաջ են դրվում: Մենք պետք ե ուղու-  
ղի առենք, վոր ձեռք բերված հաջողությունները  
չեն առաջնորդում մեղ համար բավարարաւումն այն  
պահանջների, վորոնք առաջադրում են տուրիզմին  
կուսակցությունը, բանվոր դասակարգը և կոլտըն-  
տեսականների աճող կուլտուրական պահանջները:

Վորո՞նք են զլիսավոր թերությունները ընկե-  
րության աշխատանքում: Ըստ իս՝ գլխավոր թե-  
րությունն այն ե, վոր ընկերությունը դեռ բազ-  
մաժիլիոն չի դարձել: Անտարակույս՝ ՊՏԵԼ լա-  
վագույն կազմ ունի, համեմատած այն կազմին,  
վոր ունեցին առաջներում տուրիզմով և եքսկու-  
րսիաներով զբաղվող զանազան կազմակերպու-  
թյունները: Սակայն, այդ դեռ չի նշանակում, թե  
մենք արգեն անհրաժեշտ հաջողությունների յենք  
հասել բանվորների և կոլտնտեսականների համա-  
խմբանին գործում: Ընկերությունը դեռ

հուրդների, բազաների ցանցով: Մեր գլխավոր  
անելիքն ե հանգիսանում այժմ պրոլետարական  
տուրիզմի և եքսկուրսիաների մասսայական բազմա-  
միլիոն ընկերություն ստեղծելը, վորը զուգակցելը  
առողջ հանգիսաը Փիղիքական կոմիտածության  
հետ, յերկրի պաշտպանության ամրացման համար  
տուրիստներ պատրաստելու հետ և դաստիարա-  
կեր սոցիալիստական հասարակության ակտիվ  
կառուցողներ:

Ինչո՞վ ե բացատրվում այդպիսի դրությունը,  
վոր մենք դեռ բազմամիլիոն ՊՏԵԼ չունենք: Գու-  
ցե ինչ վոր որյեկտիվ պատճառներ կան, մորուց  
հետեանքով չի կարելի բազմամիլիոն ընկերու-  
թյուն ստեղծել: Վո՞չ, ընկերներ, այդպիսի որյեկտ-  
տիվ պատճառներ չկան: Ընդհակառակը, հոգուտ  
բազմամիլիոն ընկերություն ստեղծելու այնպիսի  
որյեկտիվ պայմաններ գիտենք մենք՝ ինչուս որի-  
նակ, բանվորների և կոլտնտեսականների հսկայա-  
կան ցանկությունը ճանաչելու իրենց յերկերը,  
շարունակ աճող հետաքրքրությունը դեպի տու-  
րիզմը: Այն փաստը, վոր միլիոնավոր բանվորներ  
և կոլտնտեսականներ ուզում են ճանաչել իրենց  
յերկերը, ձգտում են իրենց աչքերովը տեսնել, թե  
ի՞նչ և ինչպե՞ս ե կառուցվում մեր յերկրում, առ-  
ջակցել մեր յերկրի բնական հարստությունների  
ուսումնասիրության և յուրացման, վկայում ե  
բազմամիլիոն ընկերություն ստեղծելու բարենը-  
պաստ հնարավորությունների մասին:

Միգուցե մեղանում նյութական տեսակետից  
վոչ ամեն ինչ բարեհաջող ե. մի՞ցուցե բանվոր-

ների ու կոլանտեսականները միջոցներ չունեն ճառանապարհորդություններ, եքսկուրսիաններ կատարելու համար։ Վո՛չ, ընկերներ, բանը դրանում ըի։ Մենք գիտենք, վոր բանվոր դասակարգի և կոլանտեսական մասսաների նյութական մակարդակն աճում է։ Հենց նյութական-կուլտուրական բարեկավող պայմանների հիմն վրա յե աճում էրենց յերկիրը տեսնելու և ուսումնասիրելու հետաքրքրությունն ու ցանկությունը. Հարյուր հազարավոր աշխատավորներ հանարավորություններ ունեն այդ գործի վրա ծախսելու միջոցների վորոշ դումար։ Այսպիսով, բարձամիլիոն ընկերություն ստեղծելու համար մեզնում որյեկտիվ պայմաններ կան։ Նշանակում ե գոյություն ունեն ինչ կորուրիչ պատճառներ, վորոնց հետեւանքով մենք մինչև ուժի չենք ստեղծել մասսայական բազմումիլիոն ՊՏԵՐ։

Առաջին պատճառը՝ մեզանում զեկավարությունն այնքան ել լավ չի դրված։ Ղեկավարության մեջ խոշորագույն թերությունն այն ե, վոր բջիջ՝ կամավոր ընկերության հիմքը, այժմ դեռ չի դարձել ամրագի տուրիստական-եքսկուրսիոն աշխատանքի կենտրոնական ողակը, առանց բջիջի առհնարին և մասսայական ընկերություն ստեղծել։

Բջիջը գլխավոր ողակն է հանդիսանում, իսկ մեզնում բջիջի ամրացման, նրա աշխատանքի վրակական բարեկավման գծով գործը վատ և դրված։

Ահա թե ինչու այժմ բազմամիլիոն ընկերություն ստեղծելու համար, նրա աշխատանքի վորակական բարեկավման համար անհրաժեշտ և վճռականապես վերակառուցել ղեկավարությունը վերից վար։ Ղեկավարության ուշադրության կենտրոնում պետք ե դնել բջիջը, նրա ամրացման պետք ե ե'լ ավելի ուշադրություն հատկացնել բջիջին, նրա կոնկրետ աշխատանքին։ Ընդհանուր հետազոտությունների փոխարեն, վորոնցով մենք հաճախ եյինք զրադշում, պետք ե ավելի շատ և ավելի ուշադրությամբ ուսումնասիրել, թի ի՞նչ է կատարվում բջիջում, ինչպես և աշխատում բջիջը, ուսումնասիրել նրա փորձը, ոգնել նրան վորակապես աճելու։ Իսկ դրա հետ միասին, յեթե մենք հարց ենք զնում ամրացնելու և աշխատանքի կենտրոնումը դնելու բջիջը, պետք ե շափազանց լրջորեն հարց դնել ՊՏԵՐ շրջանային խորհուրդների ամրացման մասին։

Ուստի, տուրիստական բազմամիլիոն կազմակերպություն ստեղծելու համար, վորն ակտիվորեն գործեր մեր ընդհանուր պայքարում, պետք ե վերացնել ղեկավարության մեջ յեղած թերությունները, վերակազմել նրան այնպես, վոր նա ուղղված լիներ առաջին հերթին բջիջների աշխատանքի բարեկավման կողմը։

Յերկրորդ պատճառը՝ ՊՏԵՐ թերազնահատումն ե, վորը գեռ գոյություն ունի մի շարք կազմակերպությունների կողմից, բայց յես կարծում եմ, ամենից քիչ կոմյերիտմիության կողմից։

Այնուամենայնիվ մենք ուղղակի պետք ե ասենք  
այդ՝ կոմյերիտմիությանը բավական բան և արել  
ընկերության համար:

Վերցնենք՝ թեկուզ, կաղըերի խնդիրը: Կազ-  
մակերպությունների ճնշող մեծամասնության մեջ  
մեր կաղըերը նախկին կոմյերիտմիութենական աշ-  
խատավորներն են կազմում:

Կարծում ենք, վոր ՊՏԵԸ պետք ե աջակցու-  
թյուն ստանա վոչ այնքան կոմյերիտմիության  
կողմից, վորքան հասարակական մյուս կազմակեր-  
պությունների և առաջին հերթին արհմիություն-  
ների կողմից: Բանը նրանումը չեմ միայն, վոր տու-  
րիզմի գործի համար մեկ, յերկու հարյուր սուրբի-  
փող դցեք, այլ անհրաժեշտ և ամենորյա ուշա-  
դրություն ընկերության նկատմամբ: Այս վերաբե-  
րում ե առանձնապես արհմիություններին, վորով-  
հետեւ ՊՏԵԸ ընդգրկում ե արհմիությունների ան-  
դամներին և ամենից առաջ՝ բանվորներին:

Յեվ մենք արհմիությունների մյուս կազմա-  
կերպությունների կողմից ընկերությունը թերա-  
գնահատելու գեմ պայքար մղելու խնդիրը դնում  
ենք իր ամբողջ սրությամբ: ՊՏԵԸ արդեն այնքան  
և աճել, մասսաների կուլտուր-քաղաքական դաս-  
տիարակության այնպիսի հզոր միջոց և դարձել,  
վոր չի կարելի նրա կողքովն անցնել կամ լուս-  
թյամբ ձեռք քաշել նրանից:

Այստեղ ընկերությունն եւ սենտք և վորեւ բան-  
ոնի: Նա պետք է ամելի լավ և ավելի շատ ժողո-  
վըրդականացնի իր աշխատանքը բանվորների և կոլ-  
տընտեսականների մեջ, ավելի հաճախ շփոփի հա-

սարակական կազմակերպությունների հետ, յեռան-  
դադին կերպով խնդիրներ դնի, այստեղ պախարա-  
կելի բան չկա: Պետք ե ավելի համառորեն ոգտա-  
գործել մամուլը: Դժբախտաբար, ընկերներ, դուք  
չեք ոգտագործում մամուլը: Ինքը մամուլն ել քիչ  
ուշադրություն ե հատկացնում այս գործին, նույն  
թվում նաև կոմյերիտական մամուլը, մանավանդ  
ստորին: Կարծ առաջ՝ մեղնում չկա կազմակերպ-  
մած, միասնական պայքար աշխատավորներին ա-  
մենալայն չափով իրեւ ՊՏԵԸ անդամ ընդգրկելու  
համար:

Ահա յերկրորդ պատճառը, վորը խանգարում է  
մեղ բազմամիլիոն ընկերություն ստեղծելու:

Յերրորդ պատճառը՝ կենտրոնական խորհուր-  
դը և տեղական կազմակերպությունները գրեթե  
բան չեն արել, վորպեսզի ծավալեն աշխատանքը  
գյուղում և մի շարք ազգային մարզերում ու հան-  
րապետություններում: Պետք ե ուղղակի ասել, վոր  
այդպիսի վերաբերմունք՝ գյուղի և ազգային ըը-  
ջանների հանդեպ, այլևս շարունակվել չի կարող,  
յեթե դուք ուղում եք պայքարել բազմամիլիոն ըն-  
կերության համար: Մենք պետք ե առաջ շարժենք  
բջիջները դեպի գյուղը, դեպի ազգային հետամնաց  
ծայրագավառները, վորտեղ մեր ընկերությունը  
հօկայական նշանակություն ունի, վորովհետեւ նրա  
միջոցով մենք կրածրացնենք կուլտուրական մա-  
կարդակը, կամ բայցնենք ինտերնացիոնալ միասնու-  
թյունը, կամ բացնենք կազը քակագի և գյուղի  
միջև, քաղաքի փորձը գյուղին կփոխանցենք՝ այն  
ինդիքները լուծելու համար, վոր կուսակցու-  
թյունն ե դրել:

Չորրորդ պատճառը, վոր պետք ե մատնահշենք  
ի գիտություն ընկերության կենտրոնական խոր-  
հըրդի և բոլոր տեղական կազմակերպությունների,  
այդ պրոլետարական տուրիզմի զարգացման թերա-  
գնահատումն ե յերեխաների մեջ։ Այստեղ վոչ մի  
բան չի արված։ Յերեխաներն առանձնապես հե-  
տաքրքրվում են ճանապարհորդություններով և  
եքսկուրսիաներով։ Իչարկե, այդ չի նշանակում, թե  
այն ամենն՝ ինչ վոր արված է հասակավորների  
մեջ, մենք պետք ե մեխանիկորեն փոխադրենք յե-  
րեխաների մեջ։ Այստեղ պետք ե առանձին մոռեցում  
լինի, պետք ե գործողությունների առանձին ծրա-  
դիր լինի, վորը՝ դժբախտաբար, վոչ կենտխոր-  
հուրդը, վո՞չ տեղական կազմակերպությունները  
դեռ չեն մշակել։ Պրոլետարական տուրիզմի բազմա-  
միլիոն ընկերություն ստեղծելու համար պետք ե  
իսկույն սկսել տուրիզմ կազմակերպել յերեխաների  
մեջ։ Յես կարծում եմ, վոր մենք իրավունք ունենք  
պահանջելու կի բարելավել աշխատանքը զյու-  
ղում, ազգային ծայրագավառներում և աշխատանքը  
յերեխաների մեջ։

Հինգերորդ պատճառը՝ պատշաճ պայմաններ  
չեն ստեղծված բանվորների և կոլտնետսականների  
լայն մասսաներին պրոլետարական տուրիզմի ըն-  
կերության մեջ ներգրավելու համար։ Խոսքն ի՞ն-  
չի մասին ե այստեղ։ Խոսքը մեր բազաների մասին  
ե։ Դուք գիտեք, վոր մենք յերբեմն այս կամ այն  
կազմակերպությունները մեր ընկերության մեջ  
ենք ներգրավվում, եքսկուրսիաներ ենք կազմակեր-  
պում, սակայն մարդկանց այնպիսի պայմանների

մեջ ենք դնում, վոր իրենց տեղերը վերադառնա-  
լուց հետո նրանք արդեն ել չեն ցանկանում եքս-  
կուրսիաներին մասնակցել։ Մենք այնպիսի բազա-  
ներ ունենք, վորտեղ մտնելիս անդամ ամաչում ես։  
1931 թվականի ամրանը յես թիֆլիսումն եյի։ Յե-  
կարծում եմ, վոր այժմ այնտեղ բազաներն ավելի  
լավ են աշխատում, իսկ այն ժամանակ ինչվոր  
սարսափելի բան եր կատարվում չկային՝ վո՞չ սա-  
վաններ, վո՞չ բարձի յերեխաներ, չենքը կեղտոտ։  
Ի հարկե, տուրիզմի մեջ հենց նոր ներգրավված  
ժարդիկ, մանավանդ բանվորներն ու կոլտնետսա-  
կանները, ընկնելով այդպիսի տեղեր, մեր ընկերու-  
թյան մասին վատ գաղափար են կազմում։

Մենք պետք ե այժմ զբաղվենք, մեր բազաները  
կուլտուրական դաստիարակության որինակելի  
ոջախներ, կուլտուրական սովորություններ պատ-  
վաստող ոջախներ գարձնելով։ Պետք ե վոր բազա-  
ները ագիտացիա չտարածեն ամբողջ ընկերության  
դեմ, այլ խթան հանդիսանան նոր հազարավոր  
մարդկանց գրավելու, նրանց, վորոնք արդեն մեկ  
անդամ յեղել են բազայում, նորից ճանապարհոր-  
դելու կամ եքսկուրսիա գնալու ցանկություն ամ-  
րացնելու նրանց մեջ։ Խնդրի այդպիսի դրույթն  
անհրաժեշտ պայմաններ կստեղծի աշխատավորնե-  
րին ամենալայն չափով ընդուրելու տուրիզմի մեջ։

Վեցերորդ՝ այդ կադրերի խնդիրն ե։ Անհրա-  
ժեշտ ե խիստ դնել կադրերի խնդիրը, վորպես մեկն  
այն պայմաններից, վորոնք կարող են ապահովել  
բազմամիլիոն ընկերության ստեղծումը։ Այժմ  
պետք ե մտածել հենց իրենց՝ տուրիստներից ՊՏԵՐ

Համար կադրեր նախապատրաստելու կենարոնաց-  
ված սիստեմի մասին և չսահմանափակվել նրանով,  
վոր մենք մի աշխատավորի վերցնենք կոմյերիսմիու-  
թյունից, մյուսին արհմիությունից, յերբորդին  
ել ինչ վոր մի այլ տեղից կհրապուրենք: Յեթե  
ՊՏԵԼ-ում նստեցնենք մի մարդու, վորը բացար-  
ձակապես չի հետաքրքրվում տուրիզմով, չի գրադ-  
վել նրանով և չի զբաղվում, նրանից վոչ մի ողուտ  
չի գա. նա այդ աշխատանքի վրա ձևականորեն  
կնայի, իր նախաձեռնությունը չի հայտնաբերի,  
չի հոգա ընկերության բարելավման և ընդար-  
ձակման մասին: Ահա թե ինչու մենք պետք և  
զբաղվենք կադրերի պատրաստության սիստեմով  
և առաջին հերթին հենց տուրիստներից, վորոնք  
ակտիվորեն մասնակցում են շարժմանը, ստեղ-  
ծում և կառուցում են ընկերությունը:

Ահա այն վեց խոչնորաները, վորոնց հազ-  
բահարումը կապահովի պրոլետարական տուրիզմի  
և եքսկուրսիաների բազմամիլիոն ընկերության  
ստեղծումը:

Վերջապես վերջինը՝ այդ պատասխանատվու-  
թյունն ե իրեն՝ ընկերության շարքերում: Առանց  
խօստ պատասխանատվության չի կարելի բազ-  
մամիլիոն ընկերություն ստեղծել: Այն ընկերու-  
թյան մեջ, վորտեղ անտնտեսավարությունը, ան-  
պատասխանատվությունն են թագավորում, վոր-  
տեղ բացակայում ե կատարման ստուգումը, աշ-  
խատանքը չի կարող լավ ընթանալ, աշխատանքի  
վորակը չի կարող բարձրանալ: Պետք ե հանձնա-  
րարել, վոր նոր կենտրոնական խորհուրդը խստո-

գույն պատասխանատվության կանչեր բոլոր նրանց,  
ովքեր թափթփվածորեն են աշխատում, առաջադ-  
րություններ չեն կատարում, տնպատասխանատո-  
կերպով են վերաբերվում իրենց աշխատանքե-  
րին: Մենք չենք կարող և չպետք ե ունենանք վոչ  
մի թափթփված, անկարգապահ ողակ, անտնտե-  
սավար տեղամաս, վոչ մի սանձարձակ աշխատա-  
կից, վորովհետև ամեն մի թափթփվածություն  
իհարկե չի նպաստում բազմամիլիոն ընկերու-  
թյուն ստեղծելու գործին, այլ միայն վնասում և  
մեր կարևորագույն խնդրի իրագործմանը:

Յեթե մենք այդպես զնենք ինդիբը մեր առաջ,  
վերացնենք այն ամենն, ինչ վոր խանգարում և  
մեզ աշխատելու և ինչի մասին վոր յես վերեւումն  
ասացի, մենք՝ կկարողանանք միլիոնավոր մասսա-  
ներ ներգրավել ՊՏԵԼ մեջ ամենամոտիկ ժամանա-  
կում: Այդ չի նշանակում, թե պետք ե պահանջա-  
ղիր առաջ ըոլոր կազմակերպություններին, թե  
անդրկովկասյան կամ լինինգրադյան այսինչ կազ-  
մակերսությունը պետք ե աճի այսքան, վոչ:  
Պայքար բազմամիլիոնության համար հնարավոր  
և վոչ թե մերկ թվերի հետեւից ընկներով, այլ  
միայն աշխատանքի վորակը բարելավելու, լայն  
հասարակայնություն և տուրիստների մասսաներ  
ՊՏԵԼ աշխատանքին, գրավելու միջացով պատաս-  
խանատվության բարձրացման, տուրիստների վո-  
րակական սպասարկման, ամբողջ աշխատանքը  
բոլչենիկյան ինքնաքննադատության կրակի տակ  
գնելու միջոցով:

Յես կամենում եյի ևս մի հարց շոշափել։ Մենք  
պետք ե այժմ շատ լուրջ կերպով խնդիր  
դնենք ռազմականացման տարրեր մտցնելու  
ՊՏԵԼ աշխատանքի մեջ, վորովհետեւ ՊՏԵԼ չի  
կարող հեռու մնալ յերկրի պաշտպանունա-  
կությունն ամրացնելու խնդիրներից, վոր-  
ովիսիք դնում ե այժմ կուսակցությունը։ Կենտրո-  
նական խորհուրդը համագումարից հետո պետք է  
յժուականապես ռազմականացման տարրեր մտցնի  
աշխատանքի մեջ, ապահովի տուրիստներից այն-  
պիսի կադրեր պատրաստելու գործը, վորոնք պա-  
տերազմի գեղքում կարողանային պաշտպանել մեր  
Խորհրդային Միությունը վորպես վորակյալ մար-  
տիներ։ Ռազմականացման հնարավորությունները  
հսկայական են, կոնկրետ ուղիները նույնպես հայտ-  
նի յեն-կոմիտայան կարմրադրու բանակի լավ փոր-  
ձը կա։ Ամբողջ խնդիրը նրանումն ե, վորպեսզի  
վերջ տանք ռազմականացման գործի թերապնահատ-  
մանը և բոլշևիկորեն հառաջ շարժենք այն։

Հետեւյալ նկատողությունը ընկերության և  
կոմյերիտմիության մասին ե։ Դուք գիտեք, վոր  
կոմյերիտմիությունը պայքարում եք ոյլ ընկերու-  
թյունն ստեղծելու համար, պայքարում եք սկզբուն-  
քային վոչ ճիշտ դրույթներով։ սակայն, բավա-  
կան չե, վոր մենք այժմ պայքար մղենք սկզբուն-  
քային վոչ ճիշտ դրույթների դեմ, վոր ունեն վորոշ  
մարդիկ ընկերության մեջ։ Այդ քիչ ե։ Այժմ կոմ-  
յերիտմիութենական կազմակերպություններից պա-  
հանջվում ե ընկերության աշխատանքի վորակը  
բարելավել։ Քիչ բան ե գեկուցումներ լսել լրջկոմը

դյուրոյում։ այժմ պետք ե ընդհաւով մոռենալ այն  
խնդրին, թե ինչպես ե զարգանում ընկերությունը  
գյուղում, ի՞նչ ե անում կոմյերիտմիությունն այդ  
կողմից ազգային հանրապետություններում, այ-  
սինքն՝ սպահանջվում ե կոնկրետ մոռեցում այդ ըն-  
կերութան զեկավարության գործին։ Այժմ դրա-  
թյունն այն չե, ինչ վոր առաջ եք և արգեն չի կա-  
րելի յերիտասարդ, անփորձ աշխատավորներ ու-  
ղարկել ՊՏԵԼ։ Այժմ մենք պետք ե ամրացնենք  
ՊՏԵԼ ունկավորությունը, ամրացնենք չրջանային  
տղակները։

Կոմյերիտմիությունը կուսակցության զեկա-  
վարությամբ պետք ե պայքար մղի այդ խնդիրների  
իրազորման համար, ընկերության աշխատանքի  
վորակը բարելավելու համար։ Միայն այդ պայ-  
մաններով մենք բազմամիլիոն կազմակերպությունն  
կունենանք։ Այդ կազմակերպությունը հանդստի և  
զվարճության կազմակերպություն չի լինի, ինչ-  
պես առաջ եք։ Կազմակերպությունն իր անդամնե-  
րին կդաստիարակի դասակարգային պայքարի վո-  
րով, սոցիալիստական շինարարության համար  
մղվող պայքարում։

## ՀԱՅԵԼ ՎԱՆԻԿԻՐ

Գ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԵԼ ԿԱ ՔԱՐՏԱ ՊԱՐՈՒՅՐՈՒ ՊՏԵԼ կենտրոնական գելուցիան  
տորիիվ

1. Լսելով ՊՏԵԼ կենտրոնական խորհրդի զե-  
կուցումը, Համիլում կենտրոն արձանագրում ե, վոր  
կոմյերիտմիության դրույթը՝ մասսայական կա-  
մավոր ընկերություն ստեղծելու համար, ամրող-

ջովին արդարացրեց իրեն։ Այդ հաստատվում է<sup>31</sup> նրանով, վոր ՊՏԵԼ անդամները ակտիվ մասնակցում են տնտեսական-քաղաքական կամ պանթաներին (խորհուրդների վերընտրությունները, դարնանացանը, փոխառությունը և այլն)։ Նշանակալից չափով ել յերեսով դարձել են գեպի արտադրությունը (տեխնիկական արշավների, ինդուստրիալ եքսկուլուսիաների կազմակերպում, տուրիստական հարվածային բերդագույների աճում)։ տուրիզմի ուղղմականացման ուժեղացումով ընկերության 50,000 մարդուց մինչև 500,000 մարդու աճումով։ մինչև 3 միլիոն մարդու ընդգրկումով ճանապարհորդությունների և եքսկուսիաների մեջ կազմակերպության ամրացումով՝ հանրապետական և մարզային ընկերությունների ցանց ստեղծելու միջոցով։

2. Նշելով նոր եքսկուրսիոն-տուրիստական բազաների շինարարության թույլ ծավալումը և յեղածների անրավարար գրությունը, կկ անհրաժեշտ է համարում ամենակարճ ժամանակում, նոր բազաների կառուցման հետ միասին, միջոցներ ձեռք առնել բարելավելու գոյություն ունեցող բազաների սանիտարական- առողջապահական դրությունը (սնունդ, սպասակեցների մատակարարում, բժայքատների, բաղնիքների կառուցում և այլն), ինչպես և բարելավելու տուրիստների կուլտուր-լուսավորական սպասարկումը։

3. ՊՏԵԼ մեծ թերությունը հանդիսանում է թույլ աշխատանքն արդյունաբերական խորշորագույն կառուցումներում, խորհտնեսություններում և ազգային ծայրագավառներում։ ՊՏԵԼ կեն-

տրոնական խորհուրդը պետք է անհապաղ վերացնի այդ թերությունը։

4. Անհրաժեշտ է ՊՏԵԼ բջիջների և տեղական կազմակերպությունների ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել միության եներգետիկ և արդյունաբերական հիմնական բազաների ուսումնասիրության վրա, Հնգամյակի դիմամիկայի, ազգային կուլտուրական շինարարության, ԽՍՀՄ բնակվող աղջությունների կենցաղի հետ ծանոթանալու վրա։

Դրա հետ միասին պետք է գալառագիտական և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միատեղ արշավներ կազմակերպել ընական հարստությունների ուսումնասիրության, մետաղների, հանքերի, տորֆի շերտերի հայտնաբերման շուրջը և այլն, ինչպես և հանածոների, վորոնք կարող են ծառայել տեղական արդյունաբերության ծավալման համար (կառլին և այլն)։

Դրա միասին անհրաժեշտ է ապահովել ՊՏԵԼ բջիջների շրջադարձը յերեսով գեպի արդադրությունը, նրանց առաջ տեխնիկական պրոպագանդի, արտադրական փորձի փոխանակության՝ վորպես արդֆինալաների կատարման և գերակատարման լծակի, խնդիրներ գնելով։

Առանձին ուշադրություն հատկացնել տուրիզմի ուղղմականացման, լայնորեն գործադրելով ուղղմականացված արշավներ, ճանապարհորդություններ, գաշտային յերույթներ։

5. Բոլորովին անբավարար համարելով կադրերի պատրաստությունը ՊՏԵԼ համար, մանա-

վանդ ազգային ծայրագավառների համար, չափա-  
ղանց անհրաժեշտ համարել տուրիստական տեխ-  
նիկումի կազմակերպումը Մոսկվայում, ինչպես և  
տուրիստական կազրերի պատրաստության ստա-  
ցիոնար ձեւերի կազմակերպումը հիմնական ինդուս-  
տրիալ կենտրոններում և զգալի չափով կազրերի  
պատրաստության ծախսերի բաժնի մեծացումը թե  
ՊՏԵԼ ԿԽ և թե տեղական կազմակերպությունների  
բյուջեյում, մանավանդ ազգային ծայրագավառ-  
ների համար:

6. Արձանագրելով կոմյերիտական կազմակեր-  
պությունների թույլ ուշադրությունը տուրիստա-  
կան աշխատանքի նկատմամբ, ԿԿ առաջտրկում և  
բոլոր տեղական կազմակերպություններին մշտա-  
կան ներկայացուցիչներ առանձնացնել ՊՏԵԼ հա-  
մար (մինչև ըրջիարհուրդները), սիստեմատիկորեն  
գերահսկելով նրանց աշխատանքներին և ՊՏԵԼ-ում  
կատարած նրանց աշխատանքը համարելով կոմ-  
յերիտական պարտականություն:

## ՀԱՄԼԿՑԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻԲ- ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ՀԼԿՑԵՄ ԿԿ նշում ե, վոր պրոլետարական  
տուրիտական շարժման զարգացման փորձը, վոր-  
պես մասսայական, ինքնամզործունեյության համա-  
վորական ընկերության փորձ, վորը միավորում և  
տուրիտական եքոկուրոյն աշխատմանը բոլոր տե-

սակներն ու ձեւերը և նրա տնտեսական սոլոսարիու-  
մը, հենորան ունենալով ստորին բջիջներն, ամ-  
բողջովին արդարացրեց իրեն:

Անցած ըրջանում 50,000 անդամ ունեցող ՊՏԵԼ  
ամերով հասավ 800,000 անդամի, 1931 թվականին  
3 միլիոնից ավելի աշխատավորներ բնդպրկեց տու-  
րիտական-եքությունը աշխատանքի զանազան  
ձևերի մեջ, դարձավ մասսայական կազմակերպու-  
թյուն: Լայնորեն ծավալվեցին հետախուզական և  
գիտական հետազոտական աշխատանքները (հետա-  
զոտական արշավ հումքի համար, եքսպեդիցիաներ  
գեպի անծանոթ կամ քիչ հետազոտված ըրջանները  
և այլն): Զգալի չափով աճեց և ամրացավ Ընկերու-  
թյան նյութական բազան:

2. Ընկերության հիմնական թերություններն  
են հանդիսանում:

ա. բջիջների անբավարար ղեկավարումը՝ ՊՏԵԼ  
ղեկավարող կազմակերպությունների կողմից. բջի-  
ջը գեռ Ընկերության հիմնական ողակը չի դարձել.

բ. կազրերի հոսունությունը, ապարատի թու-  
լությունը և անբավար ոպերատիվ աշխատանքները,  
անբավարար կարգապահությունը մի շարք կազ-  
մակերպություններում և չերտավորված ղեկավա-  
րության անհուսությունը:

գ. աշխատանքի լիակատար բացակայությունը  
խորհանակություններում և կոլտնտեսություննե-  
րում.

դ. սեղոնայնության առկայությունը շատ կազ-  
մակերպությունների աշխատանքի պրակտիկա-  
յում.

յե. անտեսական աշխատանքի անբավարար պրակը մի շարք ողակներում (շատ բազաների վատ աշխատանքը, վատթար հաշվառումը, անտեսամարությունն առանձին կազմակերպությունների մեջ)։

դ. մանկական տուրիզմի անբավարար արմատացումը։

ե. մշտական կապի բացակայությունը ՊԱԶԲ Ավլիաքիմի, ՀՈԿ-ի, Փիզկուլտի գերազանց խորհրդի և մյուս չոհագրղոված կազմակերպությունների հետ։

3. Կկ գտնում ե, վոր Ընկերության առաջիկա համագումարը պետք է անցնի ինքնաքննադատության առավելագույն դարզացման տևատնիցունով՝ Ընկերության աշխատանքի շուրջը, պետք է առանձին ուշադրություն հատկացնել բոլոր բացերի հայտնաբերմանը և այնպիսի ուղղնուկան միջոցներ ձեռնարկել, վորոնք ապահովում են ամրող տուրիստական աշխատանքի վորակի վճռական բարելավումը։

4. Պրոլետարական տուրիզմի հետագա գարգացման հիմքում պետք է դնել՝

ա. տուրիզմի արմատացումը աշխատավորների կենցաղի մեջ, ՊՏԵԼ աշխատավորների բազմամիւնն կազմակերպությունն դարձնելը, բջիջն ընկերության հիմնական ողակը և տուրիստական աշխատանքի կենտրոն դարձնելը ձեռնարկության մեջ։ ՊՏԵԼ ղեկավարությունը պետք է վճռապես վերակառուցի կազմմասսայական աշխատանքը՝ այդ ինդրի կատարումն ապահովելու համար։

բ. առաջին հնգամյակի հաջողությունների և յեկորդի իրագործման ընթացքի պարզ ցուցադրումը, մասսայական ծանոթացումը Խորհրդային Միության աշխարհագրության և եկոնոմիկայի հետ, տեխնիկական ճանապարհորդությունների և եքսկուրսիաների, հետազա զարգացումը, հումքի համար հետազոտական արշավի հետազա զարգացումը, կենտրոնական ուշադրությունը հատկացնելով իր յերկրամասի և շրջանների բնական հարստությունների ուսումնառությանը։

գ. տուրիստների հասարակական-քաղաքական մասսայական աշխատանքը ճանապարհին, ակտիվ մասնակցությունը անտեսական-քաղաքական կամոպանիաներին։

դ. մանկական տուրիզմի զարգացումը՝ վորակես հասունացող սերնդի կոմունիստական գոտության թյան ձեւերից մեկի։

յե. աշխատանքի վճռական ուժեղացումը խորհանտեսություններում և կոլտնտեսություններում։

5. Կկ. հատուկ ուշադրություն է հրավիրում տուրիստական շարժումը ԽՍՀՄ պաշտպանունակության ամրացման խնդիրներին յենթարկելու անհրաժեշտության վրա՝ հետեւյալ ճանապարհուվը՝ ընդլայնելով հատուկ կադրերի (ուղեցույցներ, ալպինիստներ, հետոփույզներ, լեռնային հրաձիգներ և այլն) պատրաստությանը, լայնորեն ներդրելով ուղագմականացման տարրերը տուրիստական աշխատանքում, վճռականապես բարելավելով բարգաների և նրանց կահավարման նոր շինարարու-

2485

թյունը, բարելավելով գոյություն ունցող բաղաների աշխատանքի վորակն, առանձին ուշադրություն դարձնելով նրանց սսնիտարական գրության վրա. կազմակերպելով վորոշակի նյութականատնտեսական սպասարկում. ապահովելով տուրիստական հանդերձանքի արտադրությունն անհրաժեշտ հումքով և նյութերով. ավելացնելով գործադրական արտոնությունների քանակը և ապահովելով տեղական տրանսպորտով:

6. Նշելով ԿԿ վորոշման անբավարար կատարումը կոմյերիտմիութենական կազմակերպությունների կողմից ՊՏԵԼ աշխատանքների նկատմամբ ուշադրությունն ուժեղացնելու մասին, պարտավորեցնել տեղական կազմակերպություններին ամենամոտիկ ժամանակում լսել ՊՏԵԼ համապատասխան որդանների զեկուցումները և գործնական ձեռնարկումներ նշել Համ ԼԿՅԵՄ Կենտկոմի և ՊՏԵԼ 1 համագումարի վորոշումներն իշխառման համար:



ԳԻՒԸ 25 հ.

18



С. Андреев  
Ленинский Комсомол и Пролетарский  
Туризм  
Госиздат ССР Армении  
Эривань—1932

2013

